ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<28>> Մարտի 2024թ. N ՄՈ/162 -Ա

ք. Արմավիր

«ՀԱՅԿԱՇԵՆԻ Գ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԵՎՈՐԳ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՏԱԹԵՎԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1 կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 26-ի N1484-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Արարատի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարի ծանուցագիրը և «Հայկաշենի Գ.Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2024 թվականի մարտի 27-ի դիմումը, 25-օրյա վարժական հավաքին մասնակցելու նպատակով.

ո ր ո շ ու մ եմ՝

1. «Հայկաշենի Գ.Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գևորգ Մինասյանին 2024 թվականի ապրիլի 9-ից մայիսի 3-ը ներառյալ ժամանակավորապես ազատել աշխատանքային պարտականությունների

կատարումից՝ պահպանելով աշխատատեղը (պաշտոնը) և վճարելով հիմնական աշխատավարձի և վարժական հավաքներին մասնակցելու օրացուցային օրերի համար հաշվարկված դրամական ապահովության դրական տարբերությունը::

2. «Հայկաշենի Գ.Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի բացակայության ժամանակահատվածում պարտականությունների կատարումը 2024 թվականի ապրիլի 9-ից մայիսի 3-ը ներառյալ վերապահել նույն դպրոցի տնօրենի տեղակալ Տաթևիկ Մարտիրոսյանին:
3. 2024 թվականի ապրիլի 9-ից մայիսի 3-ը ներառյալ «Հայկաշենի Գ.Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Տաթևիկ Մարտիրոսյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-03-28 17:50:30 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆ-ով կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**